թոնքի անշեղ և միշտ կրկնվող հաջորդականության օրենքի վրա։ Բուսական աշխարհի նորոգվելն ու նոր սերունդի բեղմնավորվելը շաղկապվում էր մարդկային ցեղի արական և իգական սեռերի մերձավորման հետ և գարնանը բուսական կյանքի նորոգվող ուժը նույնացվում էր մարդկային սերունդի նորոգվող ուժի հետ։ Հասկանալի է, թե ինչու նաև բուսական կյանքի նորոգվելը բացատրվում էր արական և իգական սկիզբների փոխձգտումով և մերձենալով։ Ատտիսին կից պաշտվում էր Փոքր Ասիայում՝ Փռյուգիայում՝ Կիբէլան, Թամուզին կից՝ Իշտարը, Ադոնիսին կից՝ Բաալատ (Բէլիտ)[2], Աշտորէտ։ Կիբէլան ուներ ահագին թվով պաշտոններ և՛ փոքրասիական ժողովուրդների մեջ, և՛ Հունաստանում, և՛ Հռոմում որպես «Մեծ մայր», Magna Mater, հունական Μήτηρ կամ ամեն տեղ պարզապես՝ Ma-Ման-սերունդներ առաջ բերող մայր[3]։ Այս աստվածուհու պատկերումը բոլորովին համընկնում է հայկական Անահիտի պատկերման հետ, որ է՝ «մեծ Անահիտ տիկին...։ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ ... որ է մայր ամենայն զգաստության, բարերար ամենն մարդկան բնության, ծնունդ է Մեծին արին Արամազդայ»... «Մեծ Անահիտ, որով կեայ և զկենդանություն կրէ երկիրս հայոց»[4]։ Ըստ հայկական առասպելաբանության Անահիտին վերագրվող հատկանիշները բացատրվում են ոչ թե զրադաշտական, այլ փոfրասիական կրոնական հայացքների զուգորդությամբ։

Մի այլ մանրամասնություն հեռացնում է մեզ Իրանից և տեղափոխում կրկին Փոքր Ասիայի կուլտուրական աշխարհը։ Կիբէլայի սիրելին կրում էր Փռյուգիայում Ատտիս անունը, այլ դեպքերում՝ Սաբաձիոս[5] կամ Մէն։ Ըստ Նիկ. Մառի, Սաբաձիոս անունը հայկական հողի վրա ստացել է «աստված» ձևը[6]։ Հետաքրքրական է, որ երբ Հայաստանում քրիստոնեությունը դարձավ ընդհանուրից ճանաչված կրոն, միաստվածության համար գործածվեց Աստված անունը և ոչ թե Դի[7]։ Վերջինը թվում է, թե գլխավորապես իշխող դասի մեջ գործածվող անուն էր՝ թագավորական տան, նախարարների և քուրմերի մոտ, իսկ լայն զանգվածների մեջ ավելի տարածված է եղել Աստված-Ատտիս-Սաբաձիոս անունը։ Այդ պատճառով էլ վերջին բառը նախընտրվել է քրիստոնեական միաստվածությունն արտահայտելու համար։

Կարելի է մի երրորդ համեմատական նյութ մատնանշել, որը ավելի դյուրին հասկանալի է դառնում ոչ թե հարևան արևելյան, զրադաշտական, այլ արևմտական՝ փոքրասիականի հետ համադրելով։ Վահագնի պաշտամունքը, որը սերտորեն զուգորդվում էր Անահիտի պաշտամունքի հետ և հեթանոս հայի աչքում նրա կողքին առաջնակարգ տեղ էր գրավում աշխարհի բախտը կարգավորվելու մեջ, կրում է նաև Վիշապաքաղ անունը։ Հայտնի է, որ Սաբա-

---

2 Արական աստվածության հետ կապվում է իգականը։ Սիդոնում՝ Բաալ և Աստարտե, Հիերոպոլսում՝ Ադադ և Ատերգատիս, Ասորեստանում՝ Բէլ և Մէլիտտա։

3 La Grande Encyclopédie, XXVI, 804—Cybèle—la force productrice et féconde, la mère de toute chose, la déesse de la génération.

4 Ագաթանգեղոս, գլ. Ե, § 53, 68։

5 Կան կարծիքներ, որ Սաբաձիոս-Ատտիսի մակդիրն էր՝ Pauly-Wissowa, Réal Encyclopédie*.

6 Марр Н. Я., Бог Сабадзиос у армян, ИАН, 1911, էջ 759—774։ Его же, Фрако-армянский Σαβάζιος—aswai и сванское божество охоты, ИАН. 1912, էջ 827։

7 Հույների մեջ՝ Zeús-Δίος, հռոմայեցիների մեջ՝ Deus, գերմանացիների մեջ՝ Gott, սլավոնների մեջ՝ Бог.

* Σαβάζιος,ὁ, Թրակո-փռյուգիական աստված, որը հետզհետե նմանեցվեց հունակ. Διόνυσος-ի Դիոնիսոսի հետ (ծան. խմբ.)։